



# ԿԻՉՈՂՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կոմարի» օրաթերթի հավելված


1991 թ. ՀՈՒՆԻՍ, ԵՁ 88: ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.



Թող ապրի հիշողությունը՝  
Տարդկային հողա, ծողովրդի  
հողա ոսկեփերուր լուչունը:



Հասանելիությունը՝ ճ. Յուրադեպանի



«ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ»

ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ Է,

ՄԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ  
ՀՈԳԵՎՈՐ

ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ,

ՀՈԳՈՒ ԱԶԶ...

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

ՉՈՒՆՑԱՐ,

ՀՈԳՈՒ ԱԶԶ

ՉՈՒՆՑԱՐ,

ԿՈՒՑՐ ԵՍ ՈՒ

ԿՈՒՑՐ:

ԵՎ ԴԱ

ԱՎԵԼԻ

ՎԱՏԹԱՐ

ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆ Է,

ՔԱՆ ԱԶԶԻ

ԿՈՒՐՈՒԹՅՈՒՆ»:

Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ



Խոտանկարք Վ. ԿՐԱՊԵՏՅԱՆԻ



Խոտանկարք՝ Վ. ԿՐՏՈՎԻ

ՆՐԱՆՑ ԵՐԿՐՈՐԿ ԸՆՏԱՆԻՔԸ ԳՈՒԼՊԵՂԵՆԻ ԱՐՏԱ ԴՐԱԿԱՆ ՄԻՆՎՈՐՈՒԹՅՆ ԷՐ, ՈՐՏԵՂ ԷՆ ԴԱՐՁԱՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԱՆՄԵՂ ԶՈՂԵՐ



ԱՆԻՉԿԱ ԱՐԱՐԱՍԻ ԱՆՏՈՆՅԱՆ

Մեծել է 1954 թվականին, Լենինականում: Միջնակարգըն ավարտելուց հետո մեկից զնաց արտագրու- թյուն՝ գուլպա-նասկեղե- նի արտադրական միավո- րում: Անիչկան շատ կարճ ժամանակամիջոցում յուրաց րեց գուլպայագործի մաս- նագիտությունը, հաստա- տուն տեղ գրավելով ար- տագրութան առաջավորնե- րի շարքերում: Ուներ երեք երեխա և միակ երազանքը սեփական անկյուն ունենալն էր: Եվ պետք էր տեսնել նրա չը- թաքցրած հրճվանքը, երբ բնակարան ստացավ «Եռան կյունի» թաղամասում: Ա- վաղ, ինչպես հարկն է, չը- հասցրեց ուրախանալ իր սեփական անկյունով: Նա զոհվեց ձեռնարկությունում, իր աշխատանքային ըն- կերներին կողքին:



ՄԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԻԳՆԱՏՅԱՆ

Սիրելի հորաբույրս, միշտ անմոռաց, թանկագին ու հա րազատ: Կյանքիդ լավագույն տարի- ները, քո պատանեկությունը անցավ 1942-45 թվականնե- րին պատերազմի դաշտում: 4-րդ հրաձգային դիվիզիայի 11-րդ գումարտակում հրամիգ էիր և մասնակցեցիր Հյուսիս ստին Կովկասի ու Հետավոր արևելքի պաշտպանությանը: Պատերազմից հետո, թվում էր, թե տխուր պատանեկու- թյանդ փոխարինելու կգան ա- ռավել երջանիկ տարիներ: Բայց այդպես էլ ոչինչ չստաց մեց քո անձնական կյանքում: Դու ամենացորդ նվիրվե- ցիր մեզ՝ սգացող եղբորդ ու նրա զավակներին, մեկ էլ կյանքիդ անբաժան մասը կազ մող գուլպայի ֆաբրիկային, որտեղ և կնքեցիր քո մահ- նանացում: Ասում էիր, թե հունվարից չեմ աշխատելու, հոգնել եմ: Բայց չէ՞ որ հուն- վարից սուս դեկտեմբեր կար դեռ... Դեկտեմբեր, որ այսպի սի ցավ թողեց բոլորիս սրտե րում, մորմոքով լցրեց մեր հոգիները:

Հավերժ հիշատակ քեզ և բոլոր անմեղ զոհերին: ՏԻՐՈՒՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ



ՎԱՐԴՈՒՇ ԿՈՐՅՈՒՆԻ ՀԱՐՈՅԱՆ

Մեծել էր 1942 թ., աշ- խատում էր գուլպեղենի ամ կոտտոն արտադրամասում: Թեև տեղը էր այն շարա- գույժ օրը, զնաց աշխա- տանքի Գնաց, որովհետև սիրագորով մայրն էր իր ե- րեք զավակների, որոնց կա- րիքներն հոգալու համար ո- չինչ չէր խնայում, ոչ էլ անգամ իր ժամանակն ու առողջությունը: Տեղ չթո- ղեց բանակից վերադոր վերադարձած որդուն բու- ժելու համար: Զարշարվեց, Բայց, ի վերջո հասավ նը պատակին:

Քարակույտերին խանդ- ված նրա մարմնում դարձ- յալ գուլթն էր, որ զիմա- ղըրում էր: Հանգստացնում էր շուրջը հավաքված հա- րազատներին, բայց խորն էին վերքերը և ուժերը լքե- ցին նրան:



ՀՆԱՐԻԿ ՎԱՀԱԳՆԻ ՄՈՒ- ՇԵՂՅԱՆԸ ծնվել է 1934 թը- վականին Ախուրյանի շրջանի Մուսայելյան գյուղում: Ավար տել է տեղի միջնակարգ դըպ րոցը: Անուսնացել է Հեթի գյուղում: Ունեցել է երեք երե- խա: 1969 թվականին տեղա փոխվել է քաղաք: Մինչև իր եղերական մահը աշխատում էր գուլպեղենի արտադրական միավորումում:



ԼԱՐԻՍԱ ՀԱՄԲԱՐԻ ԹՈ- ՐՈՍՅԱՆԸ ծնվել է 1945 թը- վականին Դուկայանի շրջա նի Մուսայելյան գյուղում: Ա- մուսնացել էր Ախուրյանի շըր ջանի Հեթի գյուղում: Երեք երեխա ուներ: 1969 թվակա- նին տեղափոխվել է Լենինա- կան: 1970 թվականից մինչև երկրաշարժի օրը աշխատում էր գուլպեղենի արտադրական միավորումում:



Մակառագիրը ՄԱՐԻՆԱ ՈՒԼԻՏԻՆԱՅԻՆ Ետպատե- րազմյան տարիներին Ռուսա տանից բերեց Լենինական և տեքստիլ կոմբինատում երկար տարիներ աշխատելով, ռուս- ազգի բանվորուհին մերվեց հայ կանանց հետ, սիրեց նը- րանց, յուրացրեց հայկական սովորույթներն ու հայոց քաղց բահունչ լեզուն: Նա ոչ միայն խոսում, այլև հաճույքով ու հաջողությամբ հայկական երգեր էր կատա- րում: Այդ ոգով դաստիարակեց նաև դստերը՝ ՌԻՏԱ ԿԱՐԱ- ՊԵՏՅԱՆԻՆ (ծնվ. 1946 թվա

կանին Լենինականում): Աշ- խատանքը աղջիկը 15 տարե կանից անդամագրվեց գուլ- պա-նասկեղենի արտադրական միավորման աշխատանքային կոլեկտիվին, աչքի ընկավ ար տադրական առաջադրանքնե րի կատարմամբ, համեսու- թյամբ ու ընկերակցու- թյամբ: Մայր ու աղջիկ նոր էին ստացել իրենց բնակարանը և դեռ շատ ծրագրեր ունեին կյանքի կոչելու, սակայն այդ բնակարանում ընդհատվեց նրանց կենսագրությունը:

ՎԱՆԱ ԲԱՐԱՍԵՈՎԱ



ՌՈՒԲԻԿ ՄԿՐՏՅԱՆԸ ծըն- վել էր 1959 թ. բանվորի ընտանիքում, ավարտել է Պ. Դուրյանի անվան միջ- նակարգ դպրոցը, աշխա- տում էր գուլպայի ֆաբրի- կայում ենթավարպետ: Կինը՝ ԳՈՂԱՐ ՄԿՐՏՅԱ- ՆԸ ծնվել էր 1963 թ.: աշ- խատում էր ամուսնու հետ նույն արտադրամասում: Գո

հարը իր բարի և համեստ բնավորությամբ սիրելի ու հարգված ընկեր էր աշխա- տանքային կոլեկտիվում, սիրված կին էր ընտանի- քում: Ամուսինները յոթ տարի համատեղ կյանք էին վա- ռում, սակայն շուենին ի- րենց ընտանեկան երջան-

կության պտուղը՝ երեխա: Զորս ամիս է, ինչ որդեգրել էին այս փոքրիկին... Սա- կայն ընտանիքին բերած նոր ջերմությունը կարճա- տև եղավ: Զարաբաստիկ ա- ղեաը հիմնովին կործանեց այդ համեմաշխ ընտանիքը: Երեքին էլ գտան շենքի փլատակների տակ շոր- րորդ օրը...



ՎԱՀԱՐՅԱՆ ԱԶԳՈ ԱՂԱՍՈՒ

Մեծել է 1925 թվականին, Լենինականում: Բարի, հոգա տար կին էր տիկին Ազգոն: Իր անմիջական բնավորու- թյան համար շատերն էին նը- րան սիրում, կիսվում նրա հետ: Վերջինս էլ իր հերթին

աշխատում էր օգտակար լի- նել շրջապատի մարդկանց գործնական օգնությամբ: Կյան քի վերջին տարիներին ար- դեն տասիկ դարձած, նա ամ բողջովին նվիրվել էր իր թոռ ներին: Այո, երջանիկ էր տի կին Ազգոն իր ընտանիքով, իր միակ տղայով ու հարսով, իր սիրասուն թոռնիկներով, իրենց հարմարավետ բնակա րանով: Նրա այդքան սիրելի ընտանեկան անկյունը ճակա տագրական դարձավ ամեղ ց՝ցումների առաջին իսկ պա- հից: Ազգո Ղազարյանը 32 տա- րի անընդմեջ աշխատեց գուլ պա-նասկեղենի արտադրա- կան միավորումում, որտեղ սիրով իր մասնագիտական գիտելիքները կիսում էր ար- տադրություն եկած սկսնակնե րի հետ:







ԳՅՈՋԱԼ ՄԿՐՏՉԻ ՊԱՊԻՅԱՆԸ

ԳՅՈՋԱԼ ՄԿՐՏՉԻ ՊԱՊԻՅԱՆԸ ծնվել է 1910 թ. Արթիկի շրջանի Աղույս գյուղում: Ամուսնացել է Նորաշենում: Մեկ և զատիարակել է 4 երեխաներ: Զարանեց մանր երանից խել էր երկու զավակներին, իսկ անվար երկրաշարժին Կյոզալն իր զուտերի նետ մնաց փլատակների տակ:

ՆԻՆԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՊԱՊԻՅԱՆԸ ծնվել է 1931 թվականին: Երկրաշարժով կտրվեց Նինայի և երկու բռունիկների կյանքի թելը:

ԼԻՆԱ ԱԼԲԵՐՏԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ ծնվել է 1959 թրվականին: Սովորել և ավարտել է № 3 միջնակարգ դպրոցը: 1976 թվականին աշխատանքի է անցել Ամասիայի գազի ծառայությունում: 1977-ին ընդունվել է պոլիտեխնիկական ինստիտուտը, 1982-ին ավարտել մեկնաշինության տեխնոլոգիա ֆակուլտետի «Մետաղահատ հաստցեներ և գործիքներ» բաժինը: Ամուսնացել էր, ուներ 2 զավակներ:

ԳՈՆԱՐԱ ՆԻՎՈՒՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ծնվել է 1985 թրվականին: ՍՈՆԱ ՆԻՎՈՒՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ՝ 1988 թվականին: Անվար երկրաշարժի օրը իրենց հարկի տակ կտրվեց նրանց նոր սկսվող կյանքի թելը:



ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՅՈՒԹ. ՀԱԶԱՐ ԻՆՆ ՀԱՐՑՈՒՐ ՈՒԹՍՈՒՆՈՒԹ

Առավոտը պաղ, թաց ու միզապատ, Ծանրացած բացվեց քաղաքի վրա, Սև անպն էր շրջում, ինչպես սև վիշապ, Ու ակոսում էր երկինքը նրա: Արևի ջերմը թույլ էր, անկարող Ցրել իր լույսով մշուշը խավար, Անձրև էր մաղում բարակ, մինչ քերոդ, Աստված սգում էր արցունքով վարար: Նորարաց օրվա բարի լույսն իր հետ, Անտես բերել էր մի սև վարազույր Մտել ամեն տուն, անկյուն, արահետ, Ծորքը մռայլ էր ու անհրապույր: Անմեղ աչքերում ծիծաղ ու ծայիտ, Մարդիկ բնության դավին անտեղյակ, Զրուցում էին հանգիստ, միամիտ, Լսում հաճելի մի պարեղանակ: Վայրկյան առ վայրկյան ժամը չարակամ, Ռուկան էր գործում անտես, անվարան, Զեր էլ նկատել ժամացույցն անգամ, Որ մահն էր մտել կրծքի տակ դարան: Ու որդեկորույս մոր պես ողբաձայն, Որպես մահագույժ մուննտիկ դահիճ, Երկինքը գոռաց երախով իր լայն, Զորս կողմը դարձավ մահվան սև մահիճ: Մանկան սուր ճիչն ու աղբյւն օգնություն, Մարեցին ինչպես հանգչող մի կրակ, Փվածքների տակ հույսը փրկություն, Զեր մարել սակայն ու կար մի ճրագ: Ու փրկվեցին քերք ավաղ, Ծատերը մեռան լուռ ու անցնահար, Ծորքն հեծկտոց էր, սուգ էր, այս ու վայս Մահը չէր ջոկել անճար ու հանճար: Մահացան, սակայն մնացին նրանք, Մեր հոգու խորքում հավերժ կենդանի, Որպես բարախող մեր սրտերի գարկ, Որպես սուրբ աղոթք ավետարանի:

ԿԻՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Ապրում, շնչում էին թոռների համար, գոհողությունների գնում համուն նրանց: Աշխույժ ու կայտառ ԶԱՐՈՒՆԸՆԻ (ծնված 1984 թ. հոկտեմբերի 13-ին) և անուշիկ ՌՈՒՐԵՐՏԻ (ծնված 1986 թ. մայիսի 12-ին) հետ էլ նրանք կնքեցին իրենց մահկանացուն, դարձան ամենակույ երկրաշարժի զոհերը: ՌՈՒՐԵՐՏ ՀԱՎՈՐՅԱՆ (ծնված 1929 թ. հունվարի 9-ին)

ոչ միայն համարաշխ ընտանիքի հիմնադիրն էր, այլև սիրված գործընկեր, աշխատանքի վետերան արևմտյան էլջանցում, ուր նա աշխատում էր որպես հերթապահ էլեկտրիկ:

ՍԱՍՆՈՒՄ ՀԱՎՈՐՅԱՆ (ծնված 1935 թ. փետրվարի 2-ին) գուպալի ֆարքիկալում հայտնի էր որպես իր գործին գերազանց տիրապետող, ընկերասեր աշխատող: 30 տարիների մկիրված աշխատանքը նրան բերել էր աշխատանքի վետերանի, սոցիցություն դասի մեկրի կոչում: Սակայն նրա իսկական կոչումը մայրությունն էր, մոռացման աստիճան մկիրումն իր անմահ թոռնիկներին:



ՍԱՍՎԵԼ ՎԱԶԳԵՆԻ ԻՍՊԻՐՅԱՆԸ ծնվել է 1978 թվականին, Լեհիսականում: Եթե մարդակույ երկրաշարժը չընդհատեր շնորհաշատ երիտասարդի կյանքը, ապա նա թերևս մեզ հաճելի շատ պահեր կպարզներ թե մարգաշխարհում (պարապում էր բոնցքամարտով), և թե համերգային դահլիճներում (դճոլա հար էր):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԵՎՈՆԻ ՄԻՉՐԱՆՅԱՆ

Ծնվել էր 1983 թ. հուլիսի 17-ին: Հասկանալի է, թե ինչ ուրախություն էր նա ծնունդը ծնողներից և հարգատեսներից համար, թե ինչ նպատակներ կապվեցին նրա հետ, թե... Երբ մեծանա... ու մայրական սիրտը քվարկում էր այն լավ ու բարին, գեղեցիկն ու արդար, որ կապում էր հարազատ արդու հետ, հաշվում օրերը՝ դրճանք իրականացած տեսնելու համար: Դեռ փոքրիկ, բայց հանախում էր մանկական գեղագիտական կենտրոն: Լավ նկարում էր: Սակայն... դաժան աղետը շրխնայեց փոքրիկ Հովհաննեսին, որ կյանքում ոչինչ չհասցրեց, չհասցրեց նույնիսկ հասկանալ, թե ինչու են մեծերը այդքան հանախազարանում, տխրում, ուրախանում: Խաղերի ու խաղալիքների իր աշխարհից միշտ բակ էր վազում, բակից ուրախ-ուրախ տուն վազում՝ մոր ձայնն աղենելով: Փոքրիկ բայիկ, դարձար խաղալիք շարճակատագրի ձեռքին ու վայրկյանեների ընթացքում հանգեցրե, նեղացար անպասելի, ասես չէր էլ եղել:



Ծնվել էր 1959 թ., մայրտի 30-ին Լեհիսականում: 1984 թ. ընտանիքով տեղափոխվել են Երևան, որտեղ էլ սովորել և գերազանց գնահատականներով ավարտել է № 183 միջն. դպրոցը: Հայրենի քաղաքի սերը նրան բերեց մանկավարժական ինստիտուտի քանասիրական ֆակուլտետ: Ընդունվելու նրա փորձը ձախողվում է: Այստեղ էլ ամուսնանում է և ունենում երկու արու զավակ:

Հուլիկը և Արտյոմը: Համիկը աշխատում էր «Ծիրակ» կոմբինատում որպես ջուլհակուհի, արտադրության ստաշավոր էր: Հայրենասեր և ազգասեր այս սղջիկը ստաշիկներին մեկն էր, որ արձագանքեց դարաբաղյան շարժմանը ու դարձավ նրա ակտիվ մասնակիցը: Կապված էր «Բանվոր» թերթին, հաճախ թղթակցում էր: Դեռ չէր բոլորել կյանքի 29-րդ գարունը, երբ վրա հասավ աղետը ու...

ՀԱՍՄԻԿ ՌՈՒՐԻԿԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ





Մովորաբար հարսանեկան լուսանկար դիտելիս ամենքս էլ հուզվում ենք և համակրվում խնամքով: Սակայն այս մեկը ուրիշ է և միայն արտառապանք, տխրություն ու անարթ թախիծ է հարուցում, երիտասարդ զույգը՝ ԱՂՈՒՆԻԿ ԵՎ ՄԵԼԻՔՍԵՐ ՀՈՎՍԵՓՅԱՆՆԵՐԸ, շատ շուտ հրաժեշտ տղվեցին կյանքին: ԱՂՈՒՆԻԿԸ ծնվել էր 1964 թ., սովորել էր 10 միջնակարգ դպրոցում: Աշխատում էր տրիկոտաժի արտադրական միավորումում, իսկ ամուսինը՝ ՄԵԼԻՔՍԵՐ ԿԱՐՈՑԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ, ծնված 1983 թ., աշխատում էր երկաթգծի ջրմուղ կայանում: Միրված ու հարգված մասնագետ էր, ընտանիքին նվիրված համեստ մի անձնավորություն:

Զոհվեցին տանը, ամբողջ ընտանիքով, այդ թվում՝ մայրը, հորաբույրը, եղբայրը, կիզը: Իսկ երկու որբուկները մը



նացել են ՏՍՏԻԿԻ խնամքին: ԳԱՂՈՒՍ ԿԱՐՈՑԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ, 28 տարեկան, ՄԵԼԻՔՍԵՐԻ եղբայրն էր, հասցրել էր ընտանիք կազմել, իր հացը վաստակել սաֆալտի գործարանում: Երջանիկ էր ջանել հայրիկը: Ավագ, ամեն ինչ կիսատ մնաց: Զոհվեց տանը, մեկ տարեկան երեխայի հետ:

### Ե ր Կ Ր Ա Յ Ա Ր Ժ

(Սկիզբը՝ 7-րդ էջում)

Եվ օգնող ձեռք պիտի լինեմ:  
Ես ձեր երազները պիտի երազեմ,  
Ես պիտի լինեմ ձեր կենդանությունը,  
Ես բարությունը պիտի լինեմ ձեր,  
Ես պիտի լինեմ ձեր հիշողությունը:  
Ես խաղաղություն պիտի հաստատեմ,  
Պիտի պահպանեմ  
Հանգստությունը ձեր շիրիմների:  
Հիմա, ես պիտի շարեմ նաև ձեր փոխարեն,  
Հիմա, ես պիտի վարեմ նաև ձեր փոխարեն,  
Հիմա, ես պիտի ցանեմ նաև ձեր փոխարեն,  
Հիմա, ես պիտի հեծեմ նաև ձեր փոխարեն:  
Հիմա, միտինգներում պիտի խոսեմ  
նաև ձեր փոխարեն,  
Հիմա, բռունցք պիտի պարզեմ  
նաև ձեր փոխարեն

Եվ 'Կարաբաղը  
Տուն պիտի բերեմ ձեր փոխարեն...  
Առ քեզ, փոքրիկ,  
Առ քեզ սիրտս:  
Միտու առ քեզ,  
'Խառնու նրան դու խաղաղիք  
(Կոբրեյի ևս խաղաղիք):  
Առ քեզ ձեռքեր՝  
(Ձեռքեր չունես):  
Առ քեզ ձեռքեր՝  
Քո վախվորած,  
Անհասկացող աշուկները,  
Քո գուլպա,  
Քո վախվորած սիրտը շոյող  
Ձեռքեր, ձեռքեր...  
Միայն թե դու,  
'Իմ մի մեծ  
Այդպես մայր,  
Այդպես մեծակ,  
Անօգնական  
Ու անսպասելի:  
Առ քեզ, փոքրիկ,  
Առ քեզ սիրտս...:

Մյուսով՝ մարդկանց օգնության հասանք:  
Եվ ինչ էլ լինե՛ր  
Ապրե՛ինք պիտի:  
Ջախջախված գլխով՝  
Ապրե՛ինք պիտի:  
Ջախջախված սրտով՝  
ապրե՛ինք պիտի:  
Քանզի աշխարհը  
Մեր աշխի տուր և մեր քիկունքում  
Համեմատյա կանգնեց,  
Եվ օտար լեզվով խոսողներն հանկարծ  
Հասկացան իրար ու նյաև ոտի:  
Նրանց քեներ իրար միացան,  
Հայաստան աշխարհ՝  
Նրանց քեներ դարձան քեզ համար  
Փ՛րկի՛մք՝ ՄԱՆ Ք՛ՍԻ:  
Եվ ինչ էլ լինե՛ր  
Ապրե՛ինք պիտի...  
Այս փաստի մեջ  
Փրկեցինք մենք մեզ:  
Ուսուցիչն՝ իր աշակերտին,  
Հայրը՝ որդուն,  
Հորը՝ որդին,  
Մայրը՝ որդուն,  
Մորը՝ որդին,  
Մեծը՝ փոքրին,  
Ով ում հասավ:  
(Այս փաստի մեջ  
ամեն ինչ եղավ՝  
այն ու թայան,  
դիակապություն:  
Ավերակների մեջ  
զարգեր խնային  
միմյանց ձեռքից՝  
զորգի պատաններ...  
Այդ փաստի մեջ  
ամեն ինչ եղավ):  
Եվ ինչ էլ լինե՛ր  
Ապրե՛ինք պիտի:  
Ունեցող սրտով,  
Քրեքված հոգով,  
Արյան,  
Մահվան մեջ  
Ապրե՛ինք պիտի...  
Եվ ինչ էլ լինե՛ր  
Ապրե՛ինք պիտի,  
Որ զոհվածներին  
Հիշելու համար,  
Մենք կառուցե՛ինք  
Աղբյուր ու խաչաբա:

(Շարունակելի)



ՇՈՂԱԿԱՅԻ ԵԳՈՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել էր 1903 թ. մեր քաղաքում: Թեև ծանր մանկություն էր անցրել, անասելի զոր կանքներ կրել, սակայն վերագտել էր իր կենսասիրությունը ամուսնու, 5 դուստրերի, ապա և տասնյակ թոռների ու ծոռների հետ: Միրված ու հարգված վաղեմի մտղ էր Շոռիկ տատիկը: Երազում էր խոր ծերություն, խաղաղ մահ: Սակայն աղետը չի՞նչ կյանքի մայրամուտին թեքված կնոջը՝ վիշտ պատճառելով հարազատներին ու մերձավորներին:


ԱՐՓԻԿ ՎԱՐՈՍԻ ԹՈՐՈՍ-ՅԱՆԸ ծնվել է 1924 թվական



նին Ախուրյանի Ազգաբազմություն: Ավարտել միջնակարգը Ամուսնացել է մեր քաղաքում: 1967 թվականից առանց ամուսնու մեծացրել է երեք երեխա:

Երկար տարիներ աշխատել է կոշկագործների կոլեկտիվում, ապա գնացել թոշակի: Որոշ ժամանակ անց վերըստին աշխատանքի է սկսել, այս անգամ կենտրոնական ատամնաբուժարանում, սրունձներով հանդերձապանի գործը:

Աղետի օրը այցի էր գնացել տղային՝ Գերցեմի փողոց: Վաճառ թոռնիկն էր հիվանդ: Արփիկը նոր էր բացել մեծ տղայի դուռը, երբ երկրաշարժից ցնցվեց շենքը: Չըհասցրեց տեսնել հրաշքով



փրկված թոռնիկին...

ԱԼԵԽՏ (ԱԼԻԿ) ԱՇՈՏԻ ՄՈՒՐԱՂՅԱՆ

Քառասունյոթ տարեկան էր Ալեքստը, ծնվել էր Լեռնականում ու հոգու հազար թելերով կապված էր սիրելի քաղաքին, տեքստիլ - կարի արտադրական միավորմանը, որի ենթակայանում որպես ենթավարպետ էր աշխատում երկար տարիներ: Գործի մեջ ակտիվ էր, նախաձեռնող ու պրպտող, նվիրված էր ընկերներին, հոգատար հայր էր ու պսակիկ:

Այն չարաբաստիկ օրը Ալեքստը տանն էր, նստել էր ճախանաշի՝ չկասկածելով, որ դա իր վերջին նախաճաշն է լինելու...

#### ԱՋՄԱՉԱՐԱՐ ԻՄ ՄԱՅՐԸ

Բազմաշարժար իմ մայրը՝ ԱՄԱՅԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՄՇԵՑՅԱՆԸ նույնպես դեկտեմբերյան աղետին զոհ դարձավ: Նա ծնվել է 1934 թվականին Ախուրյանի շրջանի Առափի գյուղում: 5 տարեկանից զորվել է մորից, դժվարությամբ մեծացել, ապա տուն ու տեղ որեկ: 4 զավակների մայր էր: Հիշում եմ, դեկտեմբերի 4-ին հավաքվել էինք և պետք է գնացինք եղբորս համար աղջիկ տեսնելու: Օտտ էր ուրախացել մայրիկս: Բայց հանկարծ տրամադրությունն ընկավ և ասաց. «Միևնույն է, չեմ տեսնի միևնույն տղայիս թագ ու պսակը»: Մայրիկ ջան, դեռ շատ երազանքներ ունեիր, չհասցրեցիր երեխաների հասցնել իրենց ցանկացածին: Քո տունը փլատակ



ների վերածվեց: Հասցրեցինք համել 4-ամյա թոռնիկիդ և քեզ: Անձր զոհելով, փրկեցիր թոռիդ: Հուսադրել էիր Ռուզաննային, որ չվախենա: Անհասկաղ տեղափոխեցինք քեզ Երևան, ապրեցիր ընդամենը 3 օր և քո մահկանացուն կրեցիր Նո 2 հիվանդանոցում:

«ԿՈՒՄՍՏՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԱԿՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԿՈՒՄՍՏՐԻԻ ՏՊԱՐԱՆ ՊԱՏՎԵՐ № 1927